ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղակալ Ամենապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի հեռագիրը Մոսկվայի և Համայն Ռուսիայի Սրբազնագույն Սինոդին.

ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՈԴԻՆ

Ընդունեցեք Մեր և ս. Էջմիածնի միաբանության խորին ցավակցությունը Մոսկվայի և համայն Ռուսիայի սրբազնագույն Պատրիարք Սերգիի մահվան առթիվ: Աղոթում ենք Ամենաբարձրյալին ուղղափառ եկեղեցու և նրա հոտի մխիթարության համար և պարգևելու նրան արժանավոր հաջորդ հանգուցյալին: Այսօր, կիրակի օրը, մայիսի 21-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում Մեր ներկայությամբ տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ հանգուցյալ Պատրիարքի համար:

Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղակալ ԳԵՎՈՐԳ արքեպիսկոպոս:

Մայիսի 21-ին կիրակի օրը ս. Էջմիածնի Մայր-տաճարում պատարագից հետո Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղակալ Ամենապ. Տ. Գևորգ Սրբ. Արքեպիսկոպոսի ներկայությամբ հոգեհանգիստ կատարվեց ռուսական պրավոսլավ եկեղեցու գլուխ — սրբազնագույն պատրիարք ՍԵՐԳԻԻ մահվան առթիվ: Հոգեհանգիստը սկսվելուց առաջ սրբ. Տեղակալը հանդես եկավ և սրտառուչ խոսքերով հայտնեց ի լուր ժողովրդյան պատրիարք Սերգիի մահվան բոթը, ապա անցավ հանգուցյալ պատրիարքի բնութագրմանը և դրվատելով նրան որպես ռուսական պրավոսլավ եկեղեցու, ս. Սինոդի և ռուս հոգևորականության վերակենդանացման գործի քաջահմուտ կազմակերպիչ՝ ջերմագինս բարեմաղթեց առ Աստված, որպեսզի հանգուցյալ պատրիարք Սերգիին հաջորդի արժանի մի անձ, որն ի վիճակի լինի մխիթարելու ռուս հավատացյալների հոտը:

Վերջացնելով իր խոսքը սրբ. տեղակալը կոչ արեց տաճարում ներկա գտնվող հավատացյալներին հայ հոգևորականության հետ միասին աղոթել առ բարձրյալն Աստված հանգուցյալ պատրիարք Սերգիի հոգու հանգստյան համար:

Հավատացյալները լարված ուշադրությամբ լսեցին մաղթանքի հուզիչ և ազդու խոսքերն ու ջերմեռանդությամբ հետևեցին հոգեհանգստի արարողությանը:

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ Արքեպիսկոպոսի Մերձավոր Արևելք ուղարկված ներկայացուցչությունը հասել է Թավրիզ: Թավրիզի հայ հասարակությունը ցույց է տվել խանդավառ ընդունելություն: Քաղաքի հայ հասարակական ընդհանուր ժողովը, որին մասնակցել է 1500 երկսեռ հայ ժողովական, ամենայն ուրախությամբ լսել է Ամենապ. Տ. Տեղակալի ներկայացուցիչ պրոֆ. դոկտ. Աշ. Աբրահամյանի զեկուցումը Երևանի կացության, Պետ. համալսարանի, ս. Էջմիածնի բարոյական, կրոնական և տնտեսական վիճակի մասին և գոհ սրտով թողել դահլիճը:

Ամենապ. Տ. Տեղակալի ներկայացուցչությունը ապրիլի 19-ին Թավրիզից մեկնել է Թեհրան ներկայանալու Իրանի շա-

հին և նրան հանձնելու Ամենապ. Տ. Տեղակալի կոնդակը:

Ատրպատականի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք Թանգյանը հաղորդում է Ամենապ. Տ. Տեղակալին, որ Թավրիզի հայությունը հանգանակել է 500·000 ռիալ հօգուտ Հայաստանի այն որբերի, որոնց հայրերը նահատակվել են Հայրենական պատերազմում: Այդ դրամարով դնվում են հագուստեղեն և կոշկեղեն, որոնք Հայաստան կուղարկվեն Թավրիզի սովետական հյուպատոսարանի միջոցով:

Թավրիզի հայությունը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար նվիրել է 267·000—300·000 ռիալ:

Ատրպատականի թեմական խորհուրդը Ամենապ. Տ. Տեղակալի տրամադրության տակ է դրել 30000 ռիալ Մայր Աթոռի տպագրական կարիքների համար: